

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Է



Քշ. 4 Ապր.՝ Ս. Արողոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նորիսան Արք. Մանուկեան շրջաբերական նամակներ յղեց Ս. Յարութեան, Ս. Ծննդեան եւ Ս. Աստուածամօր Տաճարներու տեսուչներուն, որուն մէջ կ'ըսէր. «Խոր մտահոգութեամբ եւ ցաւով տեղեկացանք, որ Ապրիլ 2-էն Ատրպէյճան ձեռնարկած է ռազմական գործողութիւններու Արցախի խաղաղ բնակչութեան եւ բնակավայրերու վրայ:

Արցախի այս դժուար պահուն, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան պարտքն է Երուսաղէմի Տէրունակոյս սրբավայրերէն աղօթք բարձրացնել առ Աստուած եւ խնդրել Տիրոջմէ, որպէսզի բշտամի ռազմական գործողութիւնները դադրին եւ խաղաղութիւնը վերահաստատուի Արցախի մէջ»:

Ուր. 8 Ապր.՝ Երեկոյեան ժամը 5-ին, Հայաստանէն Արագածոտնի փոխմարզպետ Տիկ. Նունէ Մովսիսեան այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Նոյն օրը երեկոյեան ժամը 8-ին Ժառանգաւորաց Վարժարանի մեծ սրահին մէջ, նախագահութեամբ Գերշ. Տ. Արիս Արք. Ծիրվանեանի, տեղի ունեցաւ Սաղիմահայութեան մէկտեղում՝ Արցախեան տագնապալի իրադարձութեանց, պատերազմական իրադրութեանց ու դաժան սպանութիւններու տխուր առիթով: Հաւարոյթի ընթացքին իրենց վրդովմունքը յայտնեցին Սաղիմահայ Միութեանց անդամները, ապա փակման խօսքէն ետք «Հոգւոց» արտասանուեցաւ նահատակ հերոսներու հոգիներուն հանգիստին համար: Երեկոյի վերջաւորութեան կատարուեցաւ մոմավառութիւն Ժառանգաւորաց Վարժարանի շրջափակին մէջ գտնուող Խաչքարերուն առջեւ:

Դշ. 13 Ապր.՝ Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը Յունաց Պատրիարքի եւ Լատինաց

Քիւսթօտի հետ միասին նախագահի նստավայր գացին, ուր խօսեցան Ս. Երկրին մէջ պատահական անցորդներու դաշունահարութիւններու մասին՝ շեշտելով որ Երուսաղէմը սիրոյ քաղաք մըն է եւ պէտք չէ որ նման դէպքեր պատահին:

Շր. 16 Ապր.՝ Երուսաղէմի Հար էլ Սինակոկին մէջ հայասէր Հրեայ լրագրող եւ հրապարակախօս Պրն. Եակով Ախիմէիի կողմէ կազմակերպուած Հայոց Յեղասպանութեան մասին դասախօսութեանը ներկայ գտնուեցաւ Ս. Արողոյս Դիւանապետ՝ Հոգշ. Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան: Դասախօսութեան ընթացքին, Պրն. Ախիմէի ներկայացուց Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ Իսրայէլի պաշտօնական կեցուածքն ու անցնող երկու տասնամեակներու ընթացքին Իսրայէլի Խորհրդարանի կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչման գործընթացը:

Քշ. 18 Ապր.՝ Առաւօտեան ժամը 12-ին, Պատրիարքարան այցելեցին Հին քաղաքի ոստիկանապետը, իր ոստիկաններով:

Նոյն օրը երեկոյեան ժամը 5-ին, Պատրիարքարան այցելեց Կրօնից Նախարարութեան Քրիստոնէական բաժնի վարիչ՝ Պրն. Սէզար Մարժիէ:

Շր. 23 Ապր.՝ Առաւօտեան ժամը 9-ին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. Պատարագէն ետք, Միաբանութիւնն ու ժառանգաւոր սաներ թափօրով եւ շարականի երգեցողութեամբ դէպի Եղեռնի յուշարձան գացին, ուր Ամեն. Պատրիարք Ս. Հայրը Ս. Արողոյս անունով ժողկեպսակ մը զետեղեց Հայոց Յեղասպանութեան յուշարձանին:

Նոյն օրը երեկոյեան ժամը 7-ին, տեղի ունեցաւ ջահերով երթ Ս. Յակոբեանց Մայր Տաճարէն դէպի Նոր Երուսաղէմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի: Երբին կը մասնակցէին

թէ՛ օտարներ եւ թէ՛ Հայեր, որոնք պատահա-
նորով եւ դրօշակներով քալեցին դէպի Ս.
Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի, ուր տեղի
ունեցաւ «Շաղթը» երգչախումբի հոգետը եւ
դասական երգերու կատարումները: Ապա
20:15-ին ջահերով գացին դէպի Հայոց
Ցեղասպանութեան յուշարձան, ուր տեղի
ունեցաւ մոմավառութիւն:

Գշ. 25 Ապր. Կէսօրուան ժամը 12:00-ին,
Երեւանի Զօրատու Ս. Աստուածածին եկեղեց-
ւոյ հոգետը հովիւ Արժ. Ս. Գրիգոր Քինյ.
Գրիգորեան ուխտատուներու խումբով այցե-
լեցին Պատրիարքարան եւ ստացան Պատրի-
արք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Շաբաթական այցելութեամբ Վանքիս
հիւրն էր Պոլիսէն ժամանած Հոգշ. Տ. Զաքէոս
Ծ. Վրդ. Օհանեան:

Գշ. 26 Ապր. Առաւօտեան ժամը 11:30-ին,
Պատրիարքարան այցելեցին Հին Քաղաքի
ոստիկանապետը, իր ոստիկաններով:

Եշ. 27 Ապր. Առաւօտեան ժամը 11:00-ին,
Լեւհաիայոց հոգետը հովիւ՝ Հոգշ. Տ. Տաճատ
Արդ. Ծատուրեան ուխտատուներու խումբով
այցելեցին Պատրիարքարան եւ ստացան
Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Շբ. 29 Ապր. Հայաստանէն Արժ. Ս.
Ժիրայր Քինյ. Խաչատրեան, ուխտատուներու
խումբով այցելեցին Պատրիարքարան եւ ստա-
ցան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Գշ. 3 Մայիս. Ս. Յակոբեանց Միաբա-
նութիւնը գլխավորութեամբ Ս. Արքեպիսկոպոս
Լուսաւորապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Դարիպ-
եանի, Զատկուայ շնորհաւորութեան գնաց
Յունաց Ամեն. Ս. Պատրիարքին եւ Միաբա-
նութեան:



Գշ. 4 Մայիս. Ս. Յարութեան տօնին
առիթով, առաւօտեան ժամը 9:30-էն մինչեւ
կէսօր, յաջորդաբար Պատրիարքարան Զատ-
կուայ շնորհաւորանքի եկան Յունաց եւ
Լատինաց Ամեն. Սրբազան Պատրիարքները,

եւ Ֆրանչիսկեան Քիստոստը, իրենց անդամ-
ներով, եւ Կաթօլիկ, Բողոքական, Հապէշ,
Դպտի եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցիներու
հոգետը պետերն ու ներկայացուցիչները:

Կէսօրուան 12:30-ին, Պատրիարքարան
Զատկուայ շնորհաւորանքի եկաւ նաեւ Պապա-
կան Նուիրակը:

Նոյն օրը երեկոյեան ժամը 4-6, Գերշ. Տ.
Սեւան Արք. Դարիպեանի գլխավորութեամբ՝
Միաբանութիւնը Զատկուայ շնորհաւորութիւն-
ներու գնաց Հապէշներուն եւ Ասորիներուն:

Եշ. 5 Մայիս. Երովպական Ուղղափառ
Պատրիարք Ամեն. Տ. Աբբա Մաքիաս այցելեց
Երուսաղէմ: Եաֆայի դռնէն դէպի Ս. Յարութեան
Տաճար Պատրիարք Սրբազան Հայրը
առաջնորդեցին Ս. Արքեպիսկոպոս Լուսաւորապետ՝
Գերշ. Տ. Սեւան Արք. Դարիպեան եւ միւս յա-
րանումանութեանց ներկայացուցիչները: Ս. Յար-
ութեան Տաճարի գալիքը Պատրիարք Սրբա-
զանին դիմաւորեցին Հայ, Յոյն եւ Լատին
տեսուչները եւ զինք առաջնորդեցին դէպի Պա-
տանատեղի, ապա Քրիստոսի Ս. Գերեզման,
ուր ան իր աղօթքը բարձրացուց առ Աստուած:
Աղօթքէն յետոյ եկեղեցական թափօրով
Պատրիարք Սրբազանը առաջնորդուեցաւ
Հայոց տեսչարան, ուր Գերշ. Տ. Սեւան Արք.
Դարիպեան իր բարիգալստեան խօսքը ուղղեց
Պատրիարքին եւ անոր ուղեկցող եկեղեց-
ականներուն: Ամեն. Պատրիարք Սրբազանն
ալ իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց
Հայոց Պատրիարքարանին ջերմ ընդունելու-
թեան եւ դիմաւորութեան արարողակարգը
կազմակերպելուն համար:

Բշ. 9 Մայիս. Առաւօտեան ժամը 11:30-ին,
Զատկական տօններու առիթով Իսրայէլի Նա-
խագահ՝ Պրն. Ռուվէն Ռիվլին այցելեց Հայոց
Պատրիարքարան՝ շնորհաւորելու Երուսաղէմի
բոլոր քրիստոնէայ հոգետը պետերը: Մինչեւ
Նախագահին ժամանումը, Պատրիարքարան
եկան Յոյն եւ Լատին պատրիարքները իրենց
միաբան հայրերով, Քիստոստի տեղապահը,
Պապական Նուիրակը, Երուսաղէմի մէջ Հայոց
հետեւակ Դպտի եւ Ասորի եկեղեցիներու
եպիսկոպոսները:

Հանդիպման ընթացքին բացման խօս-
քով հանդէս եկաւ Ս. Արքեպիսկոպոս Դիւանապետ
Հոգշ. Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան եւ բարի
գալուստ մաղթեց Մեծայարգ Նախագահին,
ապա յաջորդաբար հրաւիրեց Յունաց, Լատին-
նաց Պատրիարքները իրենց ողջոյնի խօսքը
ներկաներուն փոխանցելու: Յոյն եւ Լատին

Պատրիարքներու ողջոյնի խօսքէն ետք հանդէս եկաւ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրիան Արք. Մանուկեան: Իր խօսքին մէջ Պատրիարք Սրբազան Հայրը ողջունեց Մեծարգոյ Նախագահը եւ բոլոր ներկաները, ապա գնահատանքի խօսքեր ուղղեց Պրն. Ռիվլինի՝ Հայոց Յեղասպանութիւնը Իսրայէլի կողմէ ճանչնալու գործընթացի մէջ կատարած մեծ աւանդին համար: Անդրադարձաւ նաեւ իրեական ողջակիզմանը նշելով. «Նացիստական ռեժիմը յաջողութեամբ կարողացաւ կոտորել Հրեայ ժողովուրդը, որովհետեւ Հայոց Յեղասպանութեան տարիներուն ամբողջ աշխարհը լուռ ու անհաղորդ մնաց ամբողջ ժողովուրդի մը կոտորածին հանդէպ: Մենք լիայնս ենք, որ Դուք Ձեր նոր պաշտօնավարութեան ընթացքին կը շարունակէք Իսրայէլի մէջ Հայոց Յեղասպանութեան ճանաչման հարցը բարձրացնել»: Աւարտելով իր խօսքը Պատրիարք Սրբազանը Նախագահին նուիրեց հայ վարպետ՝ Յակոբ Աւագեանի կողմէ փորագրուած փայտեայ քանդակ մը, Աղամ եւ Եւա, եւ յոյս յայտնեց, որ յիշատակի այդ նուէրը Պրն. Նախագահին կը յիշեցնէ Հայ եւ Հրեայ ժողովուրդներու բարեկամութեան մասին: Հանդիսութեան վերջաւորութեան ելոյթ ունեցաւ Մեծայարգ Նախագահ Պրն. Ռուվէն Ռիվլին, եւ շնորհակալութիւն յայտնեց Ս. Աթոռոյս Գահակալին ջերմ հիւրընկալութեան համար, ապա շնորհաւորելով բոլոր ներկաները Զատկուայ տօնին առիթով, անգամ մը եւս հաստատեց Իսրայէլի պետութեան յանձնառութիւնը՝ կրօններու եւ պաշտամունքի ազատութեան պաշտպանութեան գործին մէջ: Պրն. Ռիվլին մասնաւորաբար նշեց. «Ամենապատիւ Սրբազան, ես գիտեմ, որ Դուք ծնունդով Հալէպցի էք, ուր այժմ արինահեղութիւն է: Ես կը միանամ Ձեր աղօթքներուն եւ կ'աղօթեմ Ձեր ընտանիքի ապահովութեան համար»: Նախագահը նշեց նաեւ, որ Իսրայէլի մէջ քրիստոնէական համայնքները ոչ միայն վտանգուած չեն, այլ հակառակը՝ անոնց թիւը երբայով կ'աւելնայ: Մեծայարգ Նախագահին իր խօսքը աւարտեց անդրադառնալով Հայոց Յեղասպանութեան. «1915 թուականին Հայերը կոտորուեցան, եւ իմ ծնողքս կը յիշեն, թէ ինչպէս հազարաւոր Հայ գաղթականներ ապաստան գտան Հայոց Վանքին մէջ: Իսրայէլի մէջ, ոչ մէկը կ'ուրանայ, որ ամբողջ ազգ մը կոտորածի ենթարկուեցաւ: Այսօր, ես կեցած եմ Երուսաղէմի Հայոց

Պատրիարքարանին մէջ եւ կ'աղօթեմ Ձեզի հետ միասին, զոհերու հոգիներու հանգիստին համար»:

Նախագահի խօսքէն ետք ներկաները նկարուեցան, որուն յաջորդեց հիւրասիրութիւն:

Եշ. 12 Մայիս. - Առաւօտեան ժամը 10:30-ին Պատրիարքարան այցելեց Եթովպական Եկեղեցւոյ Պատրիարք՝ Նորին Ամեն. Տ. Աբբա Մաթիաս, որ այս օրերուն հովուական այցով Երուսաղէմ կը գտնուէր: Ն. Ա. Տ. Աբբա Մաթիաս Պատրիարք Հօր դիմաւորեցին Ս. Աթոռոյս Գահակալ Ամեն. Տ. Նուրիան Արք. Մանուկեան եւ Սրբոց Յակոբեանց Սիաբանութեան անդամներ: Իր խօսքին մէջ Ամեն. Տ. Նուրիան Արք. Մանուկեան ողջունեց Նորին Ամենապատուութեան ներկայութիւնը Պատրիարքարանիս կամարներուն տակ եւ անդրադարձաւ Հայ եւ Եթովպական եկեղեցիներու դաւանաբանական մտանքներուն եւ դարաւոր բարեկամութեան: Իր պատասխան խօսքին մէջ Ամեն. Տ. Աբբա Մաթիաս շնորհակալութիւն յայտնեց ջերմ ընդունելութեան համար եւ խօսեցաւ Սուրբ Երկրին մէջ Հայ եւ Եթովպական եկեղեցիներու համագործակցութեան մասին, ապա Ս. Աթոռոյս Գահակալ Ամեն. Տ. Նուրիան Արք. Մանուկեանին նուիրեց «Ամապատի ճգնաւորներու» սրբապատկեր մը:

Գշ. 17 Մայիս. - Կէսօրուան ժամը 12-ին Մոսկուայէն Հոգշ. Տ. Պօղոս Արք. Վարդանեան եւ Արժ. Տ. Յակոբ Քինյ. Սարոյեան ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Դշ. 18 Մայիս. - Առաւօտեան ժամը 10:30-ին, Երուսաղէմի Ղպտի եկեղեցւոյ նորընտիր Եպիսկոպոս՝ Գերշ. Տ. Անպա Անտոնիոս իր միաբաններով այցելեց Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամեն. Տ. Նուրիան Արք. Մանուկեանի եւ միաբանութեան անդամներուն հետ: Պատրիարք Սրբազան Հայրը իր ողջոյնի խօսքին մէջ շնորհաւորեց նոր Եպիսկոպոսը եւ վստահեցուց, որ Հայ եւ Ղպտի եկեղեցիներու համագործակցութիւնը պիտի շարունակական ըլլայ նաեւ Անպա Անտոնիոս Սրբազան Հօր օրով: Գերշ. Տ. Անպա Անտոնիոս Ս. Քաղաքս ժամանած էր 2016-ի Մարտ ամսուն իր նոր պաշտօնը ստանձնելուն համար:

Շբ. 21 Մայիս. - Առաւօտեան ժամը 10-ին, հանդիսապետութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի,



Միաբանութիւն եւ Սաղիմահայեր կատարեցին ուխտագնացութիւն դէպի Հայոց Պարոն Տէրի Կալուածը, ուր 2015-ին Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին առիթով տնկուեցան 100 եւ ատէի ձիւնիներ եւ այդ տարածքը անուանուեցաւ Յիշատակի Պուրակ: Ապա տեղի ունեցաւ այս առթիւ գետնորում յիշատակարանին քօղագերծումը՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի ձեռամբ: Յիշատակարանը կը կրէ հետեւեալ տողերը. «Յիշատակի այս պուրակը հիմնուեցաւ Հայոց Յեղասպանութեան 100 ամեակի առթիւ, 24 Յունուար, 2015»:

Յետ յիշատակարանի բացման, իր ողջոյնի խօսքը ներկայներուն փոխանցեց հանդիսապետ Սրբազան Հայրը, ապա Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի առիթով ստեղծուած Երուսաղէմի յանձնախումբի անդամներուն յանձնեց Սփիւռքի Նախարարութեան կողմէ ուղարկուած շնորհակալագրեր, ինչպէս նաեւ յատուկ վկայագրեր բաշխուեցան ներկայներուն, որ կը վկայէ թէ յիշեալ անձը մասնակցած է Յիշատակի Պուրակի ծառատունկին, ինչպէս նաեւ տնկուած ծառին գտնուելու վայրին մասին մանրամասներ: Ուխտագնացութեան վերջաւորութեան ներկայներուն մատաղ բաժնուեցաւ: Սոյն ուխտագնացութիւնը առաջինն էր Յիշատակի Պուրակին հիմնումէն յետոյ, եւ յետ այսու պիտի դառնայ տարեկան: Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հաւանութեամբ եւ հրամանաւ, սոյն ուխտագնացութեան օրը արդէն արժանգրուած է Ս. Աթոռոյս Եկեղեցական Օրացոյցին մէջ:

Կիր. 12 Յուն. - Երեկոյեան ժամը 7:30-ին, Ժառանգաւորաց Վարժարանի մեծ սրահէն ներս, նախագահութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի, տեղի ունեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Ամալերջի հանդէսը: Այս տարի շրջանաւարտներ էին

Ընծայարանի հինգ ուրարակիրներ, եւ Վարժարանի վեց դպիրներ: Հանդիսութեան բացման խօսքէն ետք, ամբողջ երեկոյի ընթացքին Ընծայարանի եւ Ժառանգաւորաց Վարժարանի սաները հանդէս եկան ասմունքով, մեներգներով ու խմբերգներով: Հանդիսութեան վերջաւորութեան Վարժարանի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան ներկայացուց Վարժարանի եւ Ընծայարանի 2015-2016 ուսումնական տարուան տեղեկագիրը, ապա հրաւիրեց Լուսարարապետ Սրբազան Հայրը, որպէսզի յանձնէ Վարժարանի եւ Ընծայարանի առաջադէմ աշակերտներուն մրցանակներն ու շրջանաւարտներու վկայականները: Ապա Սրբազան Հայրը իր պատգամը փոխանցեց Վարժարանի եւ Ընծայարանի սաներուն: Երեկոն փակուեցաւ Ս. Աթոռոյս Օրհներգով եւ Պահպանիչով, ապա ներկայներ պատուուեցան հիւրասիրութեամբ:

Ուր. 17 Յուն. - Հայոց Յեղասպանութեան Երուսաղէմի Միացեալ Յանձնախումբի անդամներ հանդիպում ունեցան Իսրայէլի մէջ Գերմանիոյ դեսպան Դոկտ. Բլեմէնս Վոն Կեօցէին հետ: Յանձնախումբի անդամ Հոգշ. Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց Գերման ժողովուրդին եւ Խորհրդարանին նման համարձակ եւ բարոյական որոշում առնելուն համար: Դոկտ. Կեօցէ շնորհակալութիւն յայտնեց այցին համար եւ նշեց, որ Հայոց Յեղասպանութիւնը պատմական ճշմարտութիւն մըն է, եւ Գերմանական Խորհրդարանը ճանչցած է պատմական ճշմարտութիւնը:

Հանդիպման վերջաւորութեան Հոգշ. Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան յանուն Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր՝ դեսպանը հրաւիրեց Հայոց Պատրիարքարան:



Ուր. 24 Յուն. - Երեկոյեան ժամը 7-ին, հայ իրաւարան, պատմաբան եւ դիւանագետ՝

Տիար Արա Պապեան Ժառանգաւորաց Վարժարանի փոքր սրահին մէջ դասախօսեց «Հայոց պահանջատիրութեան իրաւական հիմքերը» խորագիրով:

Կիր. 26 Յուն. - Երուսաղէմի Եբրայական Համալսարանին կազմակերպուած *Holocaust Scholarship, Genocide Research, and Histories of Mass Violence* խորագրով հինգերորդ միջազգային գիտաժողովին ներկայ գտնուեցաւ Ս. Արտոյոյս Դիւանապետ՝ Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Դասախօսեց՝ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Քարտուղարի՝ Յեղասպանութեան կանխարգելման գիծով խորհրդատու՝ Mr. Adama Dieng: Գիտաժողովին ելոյթ ունեցաւ նաեւ «Սիոն»ի խմբագիր Դոկտ. Մինաս Գոնայեան՝ «Յեղասպանութեան թեման արդի հայ գրականութեան մէջ» վերնագրով, եւ Գէորգ Հինդլեան, նիւթ ունենալով «Նոր Սփիւռքի կայացումը իբրեւ հետեւանք յեղասպանութեան»:

Պատրաստեց՝
Ներսէս Արդ. Ալոյեան

**Աստուծմէ առողջութիւն կը հայցէ հայ երախան՝
Պատրիարք Հօր միջնորդութեամբ**



**Զօրակցական հաւաք՝
նուիրում հերոսական Արցախին**